

## ՈՐՊԵՍ ՇԱՀԱՌՈՒ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ՝

- Բուժում ստանալ Ձեր արժանապատվության նկատմամբ պատշաճ և հարգալից վերաբերմունքի ու անձնական տեղեկատվության գաղտնիության ապահովմամբ;
- Ստանալ տեղեկատվություն բուժման հնարավոր տարբերակների վերաբերյալ, որոնք կներկայացվեն Ձեր վիճակին և ընկալունակությանը համապատասխան;
- Մասնակցել Ձեր առողջությանը վերաբերող որոշումներին՝ ներառյալ բուժումից հրաժարվելու իրավունքը;
- Ջերժ մնալ որևէ կարգի խափանման միջոցից կամ մեկուսացումից՝ որպես հարկադրանքի, կարգապահության, հարմարության կամ հատուցման միջոց;
- Պահանջել և ստանալ Ձեր բժշկական գրառումների պատճենները, և պահանջել, որ դրանք փոփոխվեն կամ ճշտվեն;
- Ստանալ տեղեկատվություն ԴԿ (Դաշնային Կանոնագիրք) թիվ 42 Օրենքի 438.10 Բաժնի համաձայն;
- Ստանալ բուժապասարկում ԴԿ թիվ 42 Օրենքի 438.206-438.210 բաժինների համաձայն, ինչն ապահովում է ծառայությունների առկայության, պատշաճ հնարավորությունների և ծառայությունների երաշխիքների, սպասարկման կարգավորման և շարունակականության, ինչպես նաև սպասարկման ծածկույթի և լիազորությունների պահանջները:

Լոս Անջելեսի Շրջան — Հոգեկան առողջության բաժանմունք  
Հիվանդների իրավունքների գրասենյակ  
**(213) 738- 4949** – Ոչ հիվանդանոցային գանգատներ և բողոքներ  
**(213) 738- 4888** – Հիվանդանոցային գանգատներ և բողոքներ

[dmh.lacounty.gov](http://dmh.lacounty.gov)

Լոս Անջելեսի շրջան  
Վերահսկիչների խորհուրդ

- Hilda L. Solis
- Mark Ridley-Thomas
- Sheila Kuehl
- Janice Hahn
- Kathryn Barger



Լոս Անջելեսի շրջան  
Հոգեկան առողջության  
բաժանմունք  
Հիվանդների իրավունքների  
գրասենյակ

Ոչ հիվանդանոցային  
գանգատներ և բողոքներ  
**(213) 738-4949**

Հիվանդանոցային  
գանգատներ և բողոքներ  
**(213) 738-888**  
**(800) 700-9996**

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ  
ՇՐՋԱՆ

ՀՈԳԵԿԱՆ  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ  
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ



ԳԱՆԳԱՏՆԵՐԻ  
ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

---

ԱՅ ՑԵԼ ՈՒԻ  
ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Հոգեկան առողջության բաժանմունքը Լոս Անջելեսի շրջանի Հոգեկան առողջության տեղական պլանն է (ՀԱՊ): Եթե Դուք ստանում եք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ՝ ՀԱՊ ներքո, ապա իրավունք ունեք ստանալ սպասարկում, որը համապատասխանում է Ձեր սահմանափակ կարողություններին, մշակույթին, լեզվին, սեռին և տարիքին: Դուք կստանաք սպասարկում, որը համատեղ կսահմանվի Ձեր և Ձեր հոգեկան առողջության սպասարկողի կողմից: Մենք Ձեզ կոչ ենք անում ակտիվ մասնակցություն ունենալ Ձեր բուժապասարկման գործում և արտահայտել Ձեր անհանգստությունները՝ օգտվելով խնդիրների լուծման ընթացակարգից:

## ԻՆՉՊԵՄ Է ԱՇԽԱՏՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դուք կարող եք լուծել Ձեր խնդիրը՝ խոսելով անմիջապես Ձեր հոգեկան առողջության սպասարկողի կամ Հոգեկան առողջության ծրագրի ներկայացուցչի հետ:.

Դուք կարող եք աջակցություն պահանջել Հիվանդների իրավունքների գրասենյակից: Փաստաբանը կաշխատի Ձեզ հետ՝ լուծելու ցանկացած խնդիր, որն ունեք Ձեր և Ձեր սպասարկողի կամ ծառայության հետ կապված: Հիվանդների իրավունքները պաշտպանող փաստաբանների հետ կարող եք կապվել հետևյալ հեռախոսահամարներով՝

- **(213) 738-4949** ոչ հիվանդանոցային գանգատներ և բողոքներ
- **(213) 738-4888** հիվանդանոցային գանգատներ և բողոքներ

Դու կարող եք արտահայտել Ձեր գանգատը բանավոր կամ գրավոր ձևով ցանկացած ժամանակ: Դուք կարող եք Ձեզ սպասարկողից կամ Հիվանդների իրավունքների գրասենյակից ստանալ բողոքների ձևաթուղթը:

Դուք կարող եք նաև լիազորել մեկ այլ անձի՝ հանդես գալու Ձեր անունից: Դուք չեք ենթարկվի որևէ խտրականության կամ այլ տույժի՝ բողոք ներկայացնելու համար:

### MEDI-CAL ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դուք իրավունք ունեք **Բողոք** ներկայացնել Հիվանդների իրավունքների գրասենյակ կամ պահանջել **Պետական արդար լուսմներ** այն դեպքում, երբ ՀԱՊ մերժի, կրճատի, փոփոխի կամ դադարեցնի Ձեր հոգեկան առողջության բուժապասարկման համար վճարումը, անկախ այն բանից, Դուք ստացել եք **Գործողության մասին ծանուցում (ԳՄՕ)** Ձեր հոգեկան առողջության սպասարկողից, թե ոչ: **ԳՄՕ** փաստաթուղթ է, որը տրվում է շահառուին սպասարկողի կողմից՝ տեղեկացնելով սպասարկման փոփոխությունների մասին:

**ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴԱՐ ԼՍՈՒՄՆԵՐԸ** անկախ ստուգման ձև է, որն անց է կացվում Մոցիալական ծառայությունների պետական դեպարտամենտի կողմից:

Լսումների ընթացքում պարզվում է, թե արդյոք Դուք ստանում եք հոգեբուժական սպասարկում, որի իրավունքն ունեք համաձայն ՀԱՊ: Դուք կարող եք պահանջել Պետական արդար լուսմներ միայն այն դեպքում, եթե Medi-Cal ծրագրի շահառու եք և եթե ավարտել եք ՀԱՊ-ի բողոքարկման պրոցեսը:

Եթե Դուք ուզում եք Պետական արդար լուսմներ, ապա պետք է պահանջ ներկայացնեք՝ **Գործողության մասին ծանուցում** ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Դուք կարող եք պահանջել լրացուցիչ 14-օրյա ժամկետ:

### ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԱՌԿԱՆՈՒՄ

Եթե Դուք ստացել եք **Գործողության մասին ծանուցում**, ապա պետք է ստանաք **Օգնության վճարման առկախման** կարգավիճակ Հիվանդների իրավունքների գրասենյակից 10 օրվա ընթացքում: *Օգնության վճարման առկախումը* թույլ է տալիս Ձեզ շարունակելու ստանալ

հոգեկան առողջության սպասարկում ՀԱՊ-ի կողմից, քանի դեռ Դուք Պետական արդար լուսմների փուլում եք: Եթե Դուք ստանում եք **Գործողության մասին ծանուցում**, Դուք կարող եք պահանջել Ձեր **Բողոքի** «արագացված» կամ շտապ լուծում՝ արտակարգ իրավիճակների դեպքում:

Հիվանդների իրավունքների գրասենյակը կաջակցի Ձեզ Պետական արդար լուսմների պահանջ ներկայացնելու հարցում: Պահանջն ինքնուրույն ներկայացնելու համար գանգահարե՛ք (800) 952-5253 հեռախոսահամարով կամ գրե՛ք.

*Վարչական դատավճիռների բաժանմունք*  
*Մոցիալական ծառայությունների պետական դեպարտամենտ 744 P փող, Փոստատուն 19-37*  
*Մաքրամենտո, ԲՄ 95814*

### ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոգեբուժական ստացիոնար բուժօգնություն  
Հոգեբուժական սպասարկում  
Հոգեբանական ծառայություն  
Թիրախային սոցիալական աջակցություն

Վաղ և պերիոդիկ հետազոտում, ախտորոշում և բուժում (EPSDT)  
Վերականգնողական ծառայություն  
Հոգեկան հիվանդների դայակության ծառայության կազմակերպում

### ԻՆՉՊԵՍ ՄՏԱՆԱԼ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

Զանգահարեք Աքսես (ACCESS) հեռահաղորդակցության կենտրոն (800) 854-7771 հեռ.: Հեռահաղորդագրերի կամ խոլուհամրների սպասարկման համար գանգահարեք (562) 651-2549 հեռ.:

Սպասարկողների ցանկի համար գանգահարեք Աքսես կամ Հիվանդների իրավունքների գրասենյակ (213) 738- 4949 կամ այցելե՛ք Հոգեկան առողջության բաժանմունքի կայք.

[dmh.lacounty.gov](http://dmh.lacounty.gov)

### ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- Սպասարկողին փոխելու հայտ ներկայացնելու համար Դուք կարող եք դիմել Ձեր սպասարկողին կամ գանգահարել Հիվանդների իրավունքների գրասենյակ:
- Ձեր գաղտնիությունը կպահպանվի բոլոր դեպքերում համաձայն պետական և դաշնային օրենքների:
- Այս հուշաթերթիկը և առնչվող նյութերն առկա են այլընտրանքային ձևաչափով:
- Ալընտրանքային ձևաչափով նյութեր ստանալու համար կարող եք գանգահարել Հիվանդների իրավունքների գրասենյակ (800) 700-9996 կամ (213) 738-4888 հեռախոսահամարներով:
- Խոսողական կամ լսողական խանգարումներով անձինք կարող են կապվել Քալիֆորնիայի հեռահաղորդակցման ծառայություն (California Relay Services) (800) 735-2929 հեռախոսահամարով:
- Լոս Անջելեսի կոմսության Հոգեկան առողջության բաժանմունքը սահմանափակ կարողությունների խտրականություն չի դնում՝ իր ծառայություններից, ծրագրերից կամ գործունեությունից օգտվելու, դրանց հասանելի լինելու հարցում:

### ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ԱԶԱՏ ԼԵԶՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ